



Հենրիկ Էդոյանի գրական ժառանգությունը կապվում է այն սերնդի հետ, որ ընթերցողին ստիպում էր ընտելանալ բանաստեղծական «արտասովոր» մտածողությանը, որը արտաքուստ կարող էր թվալ անըմբռնելի, բայց աչքի էր ընկնում խորքային մտածողությամբ:

Պիտի նկատել, որ Հենրիկ Էդոյանի գրականության մասին գրելը բավական բարդ խնդիր է. պահանջվում է մտահորիզոն, հայ էւ արտասահմանյան գրական ընթացքների ու դեմքերի, հաճախ նաեւ միջգիտակարգային հասկացությունների ճանաչողություն: Եվ այս իմաստով Հռիփսիմե Զաքարյանի ատենախոսությունը փորձ է՝ վերհանելու Էդոյանի բանաստեղծության յուրահատկությունները, տեսնելու ավանդույթի ու նորարարության այն սահմանը, որ մի կողմից հեղինակին կապում է հայ բանաստեղծության դասական ծիրին, մյուս կողմից բերում այն անշփոթելի էությունը, որ Էդոյանինն է:

Աշխատանքը գրված է գիտական բառապաշարով, ատենախոսն աչքի է ընկնում տեսական պատրաստվածությամբ: Հատկապես նկատի ունենք Հենրիկ Էդոյանի պոեզիայի էւ պոստմոդեռնիզմի հարաբերակցության առանձնահատկությունների վերհանումները:

Մեր նկատառումներից առաջինը վերաբերում է կառուցվածքին: 203 էջանոց աշխատանքում անհամամասն են գլուխների բաժանումները: Առաջին գլուխը՝ 5 ենթագլուխներով, ինչը անհամեմատ շատ է, զբաղեցնում է 90 էջ, այսինքն՝ ատենախոսության կեսից ավելին: Երկրորդ էւ երրորդ գլուխներն իրենց երկուական ենթագլուխներով կազմում են համապատասխանաբար 33 էւ 50 էջեր:

Առաջին՝ «Հ. Էդոյանի բանաստեղծական արվեստն ու 20-րդ դարի 1960-1970-ական թվականների գրական տեղաշարժերը: Ավանդույթներ էւ նորարարություններ» գլխի երկրորդ ենթագլխի ձեւակերպման մեջ մեզ անհաջող է թվում «պոետական իրավիճակը» կապակցությունը: Բացի այդ՝ փոքր-ինչ ուշացումով է տրվում 5-րդ՝ «Բանաստեղծական շարքերի թեմատիկան էւ պոետիկան» ենթագլուխը, որը, մեր կարծիքով, կարող էր հաջորդել երկրորդ ենթագլխին, որտեղ քննված են 1960-1970-ականների քնարական հերոսի խնդիրները: Գնահատելի ենք համարում Հ. Էդոյանի բանաստեղծության տաղաչափությանը անդրադարձը (տե՛ս՝ «Ազատ

բանաստեղծության (վերլիբր) ֆենոմենը: Ռիթմական եւ ինտոնացիոն առանձնահատկությունները» ենթագլուխը):

Առաջին գլխի չորրորդ՝ «Քաղաքային տեքստն» ու նրա իմաստավորման առանձնահատկությունները» ենթագլխում հաջողված են համադրումները նույն բանաստեղծական սերնդի ներկայացուցիչներ Հովհաննես Գրիգորյանի եւ Արտեմ Հարությունյանի հետ: Կուզենայինք քաղաքային տեքստի մասին դիտարկումներում ավանդույթի համատեքստում աստենախոսն անդրադարձ կատարեր Դերենիկ Դեմիրճյանին, իսկ զուտ տիպաբանական տեսանկյունից՝ Զահրատի բանաստեղծությանը, որի առաջին ժողովածուն հենց այդպես էլ կոչվում էր՝ «Մեծ քաղաքը» (1960):

Երկրորդ գլուխը խորագրված է «Արքետիպերի ու միֆերի նորովի կիրառումը Հենրիկ Էդոյանի պոեզիայում»: Այստեղ մեզ համար տարակուսելի է թվում 119-123-րդ էջերի վրա ծավալվող պատմական տեղեկությոը միֆի մասին՝ հայտնելու համար, որ «Հենրիկ Էդոյանի տիեզերածավալ բանաստեղծական միտքն աշխարհն ընկալում է նաեւ միֆաբանական մշակույթի ոլորտում, ինչն ակնհայտորեն անդրադառնում է նրա ստեղծագործությունների վրա» (ընդգծումը մերն է, էջ 123): Ի դեպ, միֆի մասին նույնպիսի դիտարկումներ երեւան են գալիս նաեւ գլխի վերջում (էջ 134-135): Այս հատվածում արդարացված կլիներ Չարենցի ներկայությունը, թեկուզ հենց այն պատճառով, որ Հ. Էդոյանի գիտական եւ գրական հիմնարար հետաքրքրությունների տիրույթում է: Նույն հատվածում Հենրիկ Էդոյանի «հուշումով» Ռուբեն Սեւակին արդարացված անդրադարձի կողքին (էջ 124-125) նույնքան կենսական կլիներ մոտեցումը Դանիել Վարուժանին: Հատկապես նկատի ունենք վերջինիս «Լույսը» բանաստեղծությունը՝ «Գողգոթայի ծաղիկներ» շարքից:

Երրորդ՝ «Հենրիկ Էդոյանի բանաստեղծական մետաֆիզիկական հոգեւոր-մշակութային ավանդույթների համատեքստում» գլխում գնահատելի է անդրադարձը նախորդ շրջանի հեղինակներին՝ ընդգծումով, թե արեւմտահայ եւ արեւելահայ պոեզիայում քնարական «ես»-ը ձգտում էր դեպի ինքնահաղթահարման: Բերվում են Վ. Թեքեյանի եւ Վ. Տերյանի անունները, ապա հաստատվում «գենետիկ կապը նույնիսկ այնպիսի բանաստեղծական մեծությունների հետ, որոնք բանաստեղծական ձևերի դրսևորումներով,

աշխարհաճանաչման արմատներով ու խոհափիլիսոփայական մտքերով չեն համաչափվում» (էջ 144)՝ առանց, սակայն, այդ կապի ցուցադրության: Նույնը կարող ենք ասել Մեծարենցի առիթով, երբ անդրադառնում է «Էլեգիկ մտորումներ»-ի 8-րդ սեղմապոեմին՝ իբրև «դարավոր Տերունական աղոթքի նորօրյա կատարում» (էջ 146):

Մեր վերապահումներից մեկն էլ վերաբերում է օգտագործված գրականության ցանկին, նրա ընդգրկումներին եւ աստենախոսության բովանդակության հետ անմիջական կապին: Բանն այն է, որ 248 անուն ընդգրկող այդ ցանկում գերակշիռ մեծամասնությունը արհեստական են թվում: Բազմաթիվ դեպքերից բերենք մի քանիսը միայն. օրինակ՝ 19-րդ էջում «ձնհալ» տերմինի, 111-րդում՝ դեժավյուի, մեր կարծիքով, անհարկի բացատրությունները, 171-րդ էջի տողատակերում միայն թվարկման համար բերված աղբյուրները, որոնք հայտնվել են աստենախոսության մեջ զուտ պատմական էքսկուրսի արդյունքում:

Շարադրանքում հաճախ ենք հանդիպում «ընդգծումը մերն է» արտահայտությանը, բայց ոչ մի ընդգծում չենք տեսնում (էջ 45, 127 եւ այլն):

Լավ կլիներ, որ աստենախոսն անդրադառնար նաեւ Հենրիկ Էդոյանի բանաստեղծության սփյուռքյան անդրադարձներին, ինչպես Պեպո Սիմոնյանի («Հայկազյան հայագիտական հանդես») եւ Հարություն Պերպերյանի («Բազին» հանդես) օրինակները կարող էին հուշել: Երջանիկ բացառությունն այստեղ Վահե Օշականն է:

Կան մի շարք անհաջող ձեւակերպումներ, ինչպես օրինակ՝ «Հ. Էդոյանի պոեզիայում տիրում են բանաստեղծական տողի անակնկալ եւ ինքնատիպ շրջադարձերը, ինտոնացիայի բացարձակ եզակիությունը, բառի եթերային թափանցելիությունը» (էջ 51) կամ երկրորդ գլխի ամփոփիչ պարբերությունը (էջ 135):

Վերոնշյալ դիտարկումների կողքին, սակայն, պետք է նկատել, որ աստենախոսին հաջողվել է հանգամանորեն «ընթերցել» եւ բացահայտել Էդոյանի բանարվեստում առկա բազմաթիվ իրողություններ, բնագրային ինքնատիպ ու համակողմանի վերլուծություններով վերհանել դրանց գեղագիտական ու բարոյաբանական նշանակությունը, ընդգծել Հ. Էդոյանի պոեզիայի տեղն ու դերը նորագույն գրականության զարգացման գործընթացում:

